

– Ինչո՞ւ ուրեմն Աշոտ Բագրատունի այդ բանին համար գանգատեցաւ:

– Աշոտ եւ իւր հայրն Սպարապետը հանելուկ մ'են, ի՞նչ կ'ուզեն, ի՞նչ կը մտածեն, աստուած միայն գիտէ. մեր ճամփուն եւ ևոցայ ճամփուն մէջ ահագին հեռաւորութիւն կայ: Բայց այսպէս դարձեալ, Յովնան միշտ կըսէ թէ եղածեն՝ երեւոյթեն մարդ դատապարտել պէտք չէ, այլ յանցանքի ապացոյցը ձեռք ունենալու եւ այնպէս պատմելու է: Եւ այդ բանին համար Բուղայի դիւանեն՝ այդ երեք յանցաւորներուն կնքեալ թուղթը ձեռք անցնելով դատապարտ ել տուաւ Աշոտ Արծրունտունի մատնիչները:— Բայց դու ինձ այն զրուցէ թէ այսպէս երիտասարդ՝ Սիւնեաց երկիրը թողել ո՞ւր ելեր ես, ի՞նչ է, որ գթեց այսպէս կը շրջագայէ: Ո՞վ է այն կինը, որ այսօր մեզ այնչափ գովեցիր:

– Այդ կինը կուսանաց վանքի մայրապետ մ'է:

– Վասկանուշ է իւր անունը:

– Դու ուսկի՞ց գիտես:

– Բաղրատունեաց ցեղեն է:

– Դու կը ճանչե՞ս զինք ուրեմն:

– Այո, շատերէն լաւ կը ճանչեմ:

– Իրաւունք չունեի՞ զինք այնչափ գովելու:

– Բայց դու ի՞նչ տեսար:

– Ի՞նչ տեսայ. կին մը տեսայ, որ իր իշխանութեան տակ գտնուող ամենքը իր իմաստութիւնը, իր առաքինութիւնը, իր արդարութիւնը կը գովէին. բոլոր Արտանուշի գաւաոր եւ շրջակայքը իբրեւ թագուհի զինք կը յարդեն: Կայ բան մ'ել, որ հիմա չեմ կրնար զրուցել: